

ՔԱՂՎԱԾՔ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ
Կ Ա Ր Գ Ի Ց

XI. ԱՌՑԱՆՑ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Առցանց ձևով վերապատրաստումը կազմակերպում է ՀՀ փաստաբանների պալատը:

2. Առցանց ձևով վերապատրաստմանը կարող են մասնակցել բոլոր փաստաբանները, սակայն մեկ կիսամյակի համար այն կարող է հաշվարկվել ոչ ավել **4 (չորս)** ժամից:

3. Կարգի 35-րդ կետի ա. և բ. ենթակետերում նշված փաստաբաններն իրենց հաշվին կարող են առցանց վերապատրաստման դասընթացներից օգտվել մեկ կիսամյակի համար ոչ ավել **8 (ութ)** ժամից՝ Կարգի VI գլխով նախատեսված կարգով:

4. Առցանց վերապատրաստման յուրաքանչյուր դաս բաղկացած է առնվազն մեկ ժամից և չի կարող գերազանցել չորս ժամը:

5. Փաստաբաններն առցանց վերապատրաստմանը մասնակցելու համար համակարգ են մուտքագրում իրենց արտոնագրի համարը, անունը, ազգանունը և էլեկտրոնային փոստի հասցեն:

6. Դասընթացին մասնակցելու համար փաստաբանը լրացնում է համապատասխան թեսթ, համակարգը հաշվում է թեսթի արդյունքը, որը երևում է էկրանին, և պահվում տվյալների բազայում:

7. Տեսաձայնագրված դասընթացը յուրաքանչյուր 10-15 րոպեն մեկ անգամ ընդհատվում է թվաբանական կամ թեսթային հարցերով: Հարցերին ճիշտ պատասխան տալուց հետո դասընթացը շարունակվում է, հարցերի սխալ պատասխանի դեպքում դասընթացն ընդհատվում է, իսկ փաստաբանը համարվում է առցանց վերապատրաստմանը չմասնակցած:

8. Դասընթացն ավարտվելուց հետո փաստաբանը կրկին թեսթ է լրացնում, որի դրական պատասխանի դեպքում համակարգը փաստաբանի տվյալներն ուղարկում է տվյալների բազա, ինչը հնարավորություն է ընձեռում հաշվարկել փաստաբանի մասնակցությունը Առցանց դասընթացին՝ որպես պարտադիր վերապատրաստման ժամ: Թեսթի բացասական պատասխանի դեպքում փաստաբանի Առցանց վերապատրաստման ժամերը չեն հաշվարկվում: